

Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի

գիտական խորհրդի՝

12.03.2024թ. նիստի թիվ 7 արձանագրություն

**Օրակարգ**

1. 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի՝ ուսանողների առցանց հարցման արդյունքների ամփոփում:
2. Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսումնական աշխատանքային պլանների հաստատում:
3. 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացիկ քննությունների ժամանակացույցի հաստատում:
4. Ընթացիկ հարցեր:

Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի գիտական խորհրդի 36 անդամներից նիստին ներկա էին 30-ը: Դեկան Գ. Բարսեղյանը ողջունեց գործընկերներին՝ անցնելով օրակարգի առաջին հարցին՝ 2023-2024 ուստարվա 1-ին կիսամյակի՝ ուսանողների առցանց հարցման արդյունքների ամփոփմանը: Գ. Բարսեղյանը մանրամասն ներկայացրեց արդյունքները՝ նշելով, որ ընդհանուր առմամբ դրանք բավարար են և հույս հայտնեց, որ հետագայում ավելի գոհացուցիչ արդյունքներ է ակնկալում ֆակուլտետի աշխատակիցների մասին ուսանողների արձագանքից:

Այնուհետև դեկանն անդրադարձավ օրակարգի երկրորդ հարցին՝ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսումնական աշխատանքային պլանների հաստատմանը: Գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալ Մ. Յաղուբյանը հավելեց, որ ամեն ինչ ընթանում է բնականոն հունով:

Օրակարգի երրորդ հարցի՝ 2023-2024 ուստարվա 2-րդ կիսամյակի ընթացիկ քննությունների ժամանակացույցի հաստատման առումով նշվեց, որ գործընթացը կազմակերպվել է. ամեն ինչ կանոնակարգված է:

**Ընթացիկ հարցեր**

- Գ. Բարսեղյանը խորին շնորհակալություն հայտնեց գործընկերներին և գիտական խորհրդի անդամ-ուսանողներին: Նա նշեց, որ ֆակուլտետի ինը ամբիոնները երաշխավորել են իր թեկնածությունը՝ վերընտրվելու Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի դեկանի

պաշտոնում: Դեկանն ընդգծեց, որ ֆակուլտետի ամբիոնների օժանդակությունը չափազանց մեծ է ֆակուլտետում նորարարական մոտեցումների ներդրման և բարեփոխումների իրականացման գործում: Գ. Բարսեղյանը հավելեց, որ նաև ամբիոնների վարիչների ջանքերի շնորհիվ է, որ իրեն հաջողվում է ֆակուլտետում արդյունավետ իրականացնել նախատեսված աշխատանքները, միջազգային գործակցային կապերի ընդլայնումը, համատեղ դիպլոմով մագիստրոսի կրթական ծրագրերի ներդրման ուղղությամբ աշխատանքները:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Ս.Ք. Գասպարյանը, նույն ամբիոնի պրոֆեսոր, բ. գ. թ. Ա.Է. Չուբարյանը, պրոֆեսոր, բ. գ. դ. Գ.Հ. Մուրադյանը, դոցենտ, բ. գ. թ. Մ.Գ. Դալալյանը, արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ, բ. գ. թ., դոցենտ Ա.Ռ. Սեդրակյանը, նույն ամբիոնի պրոֆեսոր, բ. գ. դ. Ա.Հ. Առաքելյանը, միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆեսոր Շ.Հ. Պարոնյանը, ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆեսոր Հ.Գ. Բաղդասարյանը, անգլերենի թիվ 1 ամբիոնի վարիչ, բ. գ. թ., պրոֆեսոր Մ.Հ. Ապրեսյանը, անգլերենի թիվ 2 ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆեսոր Ե.Լ. Երզնկյանը, թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դոցենտ, բ. գ. թ. Ա.Վ. Խաչատրյանը, ֆրանսիական բանասիրության ամբիոնի վարիչ, բ. գ. թ., դոցենտ Գ.Ռ. Սարգսյանը, գերմանական բանասիրության ամբիոնի վարիչ, բ. գ. թ., դոցենտ Գ.Վ. Սավոյանը և ուրիշներ:

Ելույթ ունեցողները, բարձր գնահատելով *Գ.Ռ. Բարսեղյանի՝ որպես եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի ղեկանի* գործունեությունը, նշեցին, որ ստորաբաժանման ղեկավարի 5 տարվա արդյունավետ աշխատանքային փորձը, կրթական ու գիտահետազոտական գործընթացների կազմակերպումը, ուսանողակենտրոն կրթության ապահովումը, բակալավրի ու մագիստրոսի կրթական ծրագրերի արդիականացման ուղղությամբ կատարված աշխատանքները, որոնց արդյունքում էականորեն բարելավվել է կրթության որակը, գիտական ոլորտի

ձեռքբերումները լիովին թույլ են տալիս երաշխավորել նրա թեկնածությունը դեկանի պաշտոնում վերընտրվելու համար:

Գիտական խորհրդի անդամներն իրենց ելույթներում շեշտադրեցին Գ. Բարսեղյանի *անձնային որակները, մասնագիտական գիտելիքներն ու կատարման հմտությունները*: Նախ նշվեց, որ Գ. Բարսեղյանը վայելում է թե՛ գործընկերների, պրոֆեսորադասախոսական կազմի, թե՛ ուսանողների սերն ու հարգանքը: Նա ազնիվ, ուղղամիտ և սկզբունքային անձնավորություն է: Նրա նվիրվածությունն աշխատանքին ու պատասխանատվության բարձր զգացումն ակնհայտ են և անհերքելի: Որպես հմուտ դեկավար՝ կարողանում է կայացնել արդյունավետ որոշումներ՝ խնդրահարույց իրավիճակներում գտնելով լավագույն լուծումը: Նշվեց նաև գիտական ասպարեզում Գ. Բարսեղյանի կատարած զգալի աշխատանքների մասին՝ նկատի առնելով մասնագիտական գիտելիքների լայն շրջանակը:

Ելույթ ունեցողներն անդրադարձան Գ. Բարսեղյանի՝ որպես ստորաբաժանման դեկավարի կողմից իրականացվող արդյունավետ կառավարմանը, ինչը մեծապես խթանում է աշխատակիցների աշխատանքային վարքագծի արդյունավետության բարձրացումն ու բոլոր ամբիոնների գիտամանկավարժական գործունեության համալիր բարելավումը: Թիմային աշխատանքի, ֆակուլտետի գիտակրթական գործընթացի դեկավարման ու հետևողական վերահսկողության, ինչպես նաև բանակցային ու հաղորդակցային մեխանիզմների ներդրման շնորհիվ Գ. Բարսեղյանը հաջողել է ապահովել ու բարելավել դրական աշխատանքային մթնոլորտը: Գ. Բարսեղյանը, դեկավարելով ֆակուլտետի գիտակրթական գործընթացի արդյունավետ կազմակերպումը, նպաստում է ակադեմիական միջավայրում երկխոսության բարելավմանը:

Հղում կատարվեց նաև վերջին տարիներին ֆակուլտետի լսարանների տեխնիկական հագեցվածության ապահովմանը, ինչը վկայում է ռազմավարական ուղղությունների գծով Գ. Բարսեղյանի կատարած զգալի աշխատանքների մասին: Ընդգծվեց նաև այն փաստը, որ ընդլայնվել է ֆակուլտետի միջազգային համագործակցության շրջանակը:

Ելույթ ունեցողները հավելեցին, որ Գ. Բարսեղյանը պատրաստակամ է գործադրելու կազմակերպչական կարողություններն ու կառավարչական հմտությունները՝ աջակցելու գործընկերներին ուսումնական գործընթացում ծագած դժվարությունները հաղթահարելու հարցում:

Ի լրումն վերոնշյալի՝ գիտական խորհրդի անդամներն ընդգծեցին, որ արդյունավետ կառավարման ու համակարգային մոտեցումների շնորհիվ Գ. Բարսեղյանը կարող է ապահովել ֆակուլտետի արդյունավետ գործունեության շարունակականությունը, նպաստել հետազոտահենք կրթության որակի բարելավմանն ու շարունակել խթանել միջազգային համատեքստում գիտական ոլորտի առաջընթացը:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝**

Հաշվի առնելով վերոնշյալ կարծիքները՝ երաշխավորել գործող դեկան, Բ.Գ.Թ., դոցենտ **Գևորգ Ռուդիկի Բարսեղյանի** թեկնածությունը եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի դեկանի պաշտոնում վերընտրվելու համար: Որոշումն ընդունվեց միաձայն:

- Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ, Բ.Գ.Դ., պրոֆեսոր Ս. Գասպարյանը նշեց, որ սկսվել են Պյատիգորսկի պետական համալսարանի հետ համատեղ ուսանողական օլիմպիադայի անցկացման նախապատրաստական աշխատանքները: Ամբիոնը զգալի աշխատանք է կատարում օլիմպիադայի իրականացման ուղղությամբ:

Եվրոպական լեզուների և հաղորդակցության  
ֆակուլտետի դեկան և գիտխորհրդի նախագահ,

Բ.Գ.Թ., դոցենտ՝



Գ. Ռ. Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար, Բ.Գ.Թ., դոցենտ

Մ. Գ. Դավալյան

12.03.2024թ